

ՄԻՄՎՈՒԻՉՄԸ ԴՐԱՄԱՅԻ ՄԷՋ *)

Համաշխարհային ընդարձակ կեանքը անցնում է այսօր մարդկային պատմութեան ամենամուսուլ ու ամենածանր շրջաններից մինը. մտային վրդովմունքի, թափառումների, անյայտ ապագայի նկատմամբ տածած հիւանդագին գուցէ և անպտուղ բռնկումների մի արիւնստ դարեշրջան: Ամենասարսափելի ու մահացու օրեր, որոնք երբևիցէ ապրել է մարդկութիւնը... Թւում է թէ փոթորիկների ու մրրիկների նախերգանքն ենք լալիս, թւում է թէ տխուր յայտնագործութիւնների նախազգացումների մէջն ենք դողդողում... Մի ծանր ու անյաղթելի սարսափ է նստած մեր սրտերի վրայ. բոլոր մտքերին ու բոլոր հոգիներին տիրում է մի մթին տրամադրութիւն, որ կարելի է արտայայտել այսպէս՝ արհաւիրքի նախօրեակ: Քաղաքական կեանքի հորիզոնը մթաքնած է անեղ, անհեթեթ, խոշոր ու խորհրդաւոր ուժով, որ իր գերագոյն անյուսութեան մէջ՝ կամենում է աւերել ամեն ինչ, կործանել հասարակական ու պետական բոլոր կարգերն ու օրէնքները, ուժակոծել հնագոյն եկեղեցիներն ու նորագոյն պարլամենտները հաւասարապէս. մի ոգի, որ անգիտանում է ամեն սահման, որ մերժում է ամեն կառավարութիւն, որ հեզնում է թունաւոր անտարբերութեամբ ժամանակակից բոլոր բարոյական ըմբռնումները. մի ոգի, որի անունն է անիշխանութիւն:

Ու այն, ինչ կեանքի մէջ հազիւ է զգացում գրականութեան մէջ արդէն գործում է: Այդ տեսակէտից չափազանց հետաքրքրական է քննութեան ենթարկել «գեղարուեստական անիշխանութեան» այն քայլերը, որոնք դիտւում են իբր ամենագորեղ ըմբոստացում բոլոր հին սկզբ-

*) Յօդուածս կազմելիս ի նկատի եմ ունեցել հետեւեալ աղբիւրները. — «La poésie nouvelle». A: Beaunier, «Les jeunes» Daumic, «l'impression de théâtre» Lemaître, «Mercure de France» ամսագիրը, «Вѣстникъ иностр. литер.» ամսական ամսագիրը, «Le trésoro des humbles» Maeterline, «Le Double jardin» Maeterline, «l'Histoire de la littérature française», l'Histoire de la litter. allemande» և այլ մանր յօդուածներ:

բունքների, անժամանակակից օրէնքների, ունիւնների, պոզիտիվիզմի, նատուրալիզմի դէմ... Սկզբունքներ ու տեսութիւններ, որոնք վերջին քառասուն տարուայ ընթացքում թագաւորում էին եւրոպական գրականութեան մէջ: Նոր գրականների ձգտումները արտայայտուում են աւելի գրականութեան ամենակենսական և ամենաթրթուուն ճիւղի՝ դրամայի մէջ: Այդ ճիւղն է համարուում լաւագոյն արտայայտիչը հասարակական նոր տրամագրութիւնների ու երազանքների, որովհետև այդտեղ են անմիջապէս ընդհարուում միմիանց դրամատուրգ-բանաստեղծն ու հասարակութիւնը: Այդ պատճառով սիմվոլիստները դէպի այդ ճիւղը լարեցին իրանց ռազմային հարուածները: Մետերլինկ՝ Ֆրանսիայում, Հաուպտման՝ Գերմանիայում և Իբսէն՝ Նորվեգիայում տարբեր ճանապարհով ու տարբեր արտայայտութիւններով դիմում են միևնոյն նպատակին—քանզեւ ունիւնական ու հին դասական հիմունքները ժամանակակից թատրոնի և վերստեղծել դրաման նոր իդէալիստական սկզբունքների համաձայն:

Քննադատներն ու թատրոնական ունիւնները վաղուց զգում էին դաւիթ վտանգը. զգում էին, բայց չէին համարձակուում այդ մասին խօսել: Վերջապէս Ռասինի, Կորնելի և Մոլիէրի հաւատարիմ պաշտպաններից մինը՝ Փերրիլինանը Բրիւնտիէր, Ֆրանսիական ակադեմիկ ու քննադատ, գեղարուեստական անիշխանութեան ամենահետևողական թշնամին հարկ համարեց պաշտպանողական դիրք բռնել սիմվոլիստական և միստիք ներշնչումների դէմ... Նա սիրով համաձայնուում է նորերի հետ այն կէտում, որ բնական ստեղծագործութեան համար դոյութիւն չունի ոչ մի արտաքին օրէնք: Ռասին և Կորնել դասական երեք միութիւնների օրէնքը պահպանելով հանդերձ համուում էին միևնոյն հետեանքին, որին հասնում էր Շէքսպիր առանց պահպանելու այդ օրէնքը: Սոֆոկլէս և Եւրիպիդէս խուսափում էին ծիծաղելի ու սարսափելի, ողբերգականի ու կոմիքականի միութիւնից. մի բան որ Շէքսպիրի սիրած ձևերից մինն է... Հարկաւոր է արդեօք ընաւորութիւնը ենթարկել հերոսի դրութեան՝ թէ՛ դրութիւնը ընաւորութեան—բացառապէս միևնոյն է. հնարաւոր է և՛ մէկը և՛ միւրը: Ամեն ինչ կախուած է բանաստեղծի անձնականութիւնից, խառնուածքից:—

Այդպէս ուրեմն—եզրակացնում է Բրիւնտիէր—ոչ մի արտաքին օրէնք չկայ: Բայց դա տակաւին չէ նշանակում. թէ գոյութիւն չունի նաև ներքին օրէնք, գեղարուեստական սկզբունք: Ի՞նչու՞ն է կայանում թատրոնի այդ հիմնական ու

անհրաժեշտ օրէնքը. (La loi du théâtre): Քննադատի կարծիքով դրամայի ամբողջ էութիւնը հերոսի կամքն է. «Գլխաւոր ու կարևոր բանը, որ մենք պահանջում ենք դրամատիքական բոլոր երկերից՝ ցուցադրութիւնն է կամքի, որ ձգտում է մի նպատակի և որ դիտակցում է ինքն իրան: Վէպն ու դրաման ոչ թէ միայն միևնոյն բանը չեն, այլ և տրամագծօրէն հակառակ են միմիանց իրանց գեղարուեստական խնդիրներով: Վէպի հերոսը իր վրայ ընդունում է շրջապատող դէպքերի գործողութիւնը, իսկ դրամայի հերոսը ամենից առաջ ինքն է գործում, նրա կամքը յաղթում է խոչնդոտներին, նա պիտի սեփական բախտի ստեղծագործողը լինի...» Բրիւնտիէրի կարծիքով Ֆրանսիական նատուրալիստական դպրոցի ամենամեծ մոլորութիւններից մինը կայանում է նրանում, որ նա շփոթեց վէպը դրամայի հետ:

Այն խոչնդոտները, որոնց դէմ կուռւմ է հերոսի կամքը, սահմանում են բնական ստեղծագործութեան յատկութիւնն ու տեսակը: Եթէ խոչնդոտները անյաղթելի են ու հերոսը պիտի մեռնի վարած կուռի մէջ՝ առաջ է գալիս ողբերգութիւն: Եթէ խոչնդոտները ու հերոսի ոյժը հաւասարակշիռ են ու ելքը անյայտ է՝ առաջ է գալիս դրամա. իսկ եթէ խոչնդոտներն անզօր են հերոսի կամքի առաջ և յաղթութիւնն անկասկածելի՝ առաջ է գալիս կոմիդիա:

Եւ այսպէս դրամայի էութիւնը գիտակցական կեանքի կռիւն է արգելքների դէմ... Բրիւնտիէր եռանդուն կերպով աշխատում է ապացուցանել այս միտքը թատրոնի պատմութիւնից վերցրած քաղմաթիւ օրինակներով: Բոլոր դարերում ու բոլոր ժողովուրդների մէջ դրամատիքական արուեստը հասնում է ամենակատարեալ ծաղկման՝ հերոսական կուռի, ժողովրդական կամքի մեծ լարման շրջանում: Իզուր չէ յունական ողբերգութիւնը ժամանակակից համարւում մեղական կռիւներին, երբ Եւրոպան առաջին անգամ յաղթեց Ասիային: «Պրոմէթէոսի» անմահ ստեղծագործող էսքիլէսը կուռւմ էր պարսիկների դէմ ու Սալամինայի ճակատամարտի օրը ծնւում է Եւրիպիդէս: Սերվանտէս, Կալդերոն պատկանում են այն դարերջանին, երբ Իսպանիայի կամքը օրէնք էր ամբողջ Եւրոպայի և Նոր-Աշխարհի համար: Իսկ Ռասինի և Կորնելի ստեղծագործութիւնների մէջ արտացոլում է ազգային մեծ ոյժի հմայքը 16-րդ դարի վերջում, երբ Ֆրանսիան դիմում էր դէպի պետական միութիւն և երբ տեղի ունէր Հենրիխ IV-ի, Ռլլէօի, Մազարինի փառահեղ քաղաքական գործունէութիւնը: Եթէ Ֆրանսիական ողբերգութիւնը իսպանական դրամայի նը՝

ման պատկանում է մի քիչ յետոյ եկող դարեշրջանի, լիովին ճշտութեամբ չէ զուգադիպում ժողովրդական կամքի մեծ լարման վայրկեանին՝ այդ էլ առաջանում է այն հանգամանքից, որ ոչ ամեն ժամանակ մեծ պատճառների գործողութիւնները ակնթարթապէս արձագանք են գտնում գրականութեան մէջ։ Հարկաւորում է յաճախ մի փոքր ժամանակամիջոց, որպէսզի գործողութիւնը ամբողջովին լուսարանուի։ Անկասկած է, որ Գէօթէի և Շիլլէրի հանճարեղ դրամաները սերտ կերպով կապուած են գերմանիայի ազգային վերածնութեան՝ Ֆրիդրիխ Մեծի դարեշրջանին։—Եւ ընդհակառակը. այն ժամանակ, երբ մարդկութեան կամքը թուլանում է և դարգանում է աւելի կրաւորապէս՝ բարեյաջող կերպով է ծաղկում վէպը, որի էութիւնը գործողութեան և արտաքին աշխարհի ազդեցութեան արտայայտացումն է հերոսի վրայ։ Ահա ինչո՞ւ համար վէպի զարգացումը երբէք չէ զուգատիպում դրամայի զարգացման։ Արեւելքում, ուր մարդկային կամքը շարունակ ճնշուած է եղել՝ գոյութիւն ունին բազմատեսակ վէպեր, բայց ոչ մի դրամա։

Բոլոր այս դասողութիւնները ուղղուած են ըստ էութեան մի նպատակի համար.—լուսարանել ժամանակակից ֆրանսիական թատրոնի անկման պատճառները, այսպէս անուանուած «բեմական տաղնարը», որից շարունակ գանգատում են քննադատները, անգամ իրանք դրամատուրգները։

Երևոյթի հիմնական պատճառը Բրիւնտիէր գտնում է ժամանակակից քաղաքակիրթ մարդկութեան կամքի թուլութեան մէջ։ «Փիլիսոփաներն ու նոյն իսկ սովորական մտածողները գանգատում են, որ մարդկային կամքի զսպանակները թուլացել են, աւելի ու աւելի կորցնում են իրանց ամբողջիւնը և ծածկում ժանգով»...

Մենք չենք կարողանում կամենալ. չենք կարողանում կռուել արգելքների դէմ։ Մենք անձնատուր ենք լինում արտաքին կեանքի հոսանքներին։ Այս ցաւոտ երևոյթին քիչ չէ նպաստում նաև ժամանակակից գիտական դետերմինիզմը*), որ նման ասիական ճակատագրականութեան՝ (ֆատալիզմի) մարդկութեան կամքը ոչնչութեան է հասցնում։ Իսկ այնտեղ, ուր չկայ ժողովրդական հերոսական կամքի մեծ լարումը՝ չէ կարող լինել և մեծ դրամա։ Ահաւասիկ ինչպէս է բացատրում Բրիւն-

*) Իւրաքանչիւր երևոյթ իր պատճառը ունի. մարդկային գործողութիւնները ևս կախում ունին արտաքին պատճառներից, անա այդ ուսմունքը փիլիսոփայութեան մէջ կոչւում է դետերմինիզմ։ Մ. Խ.

տիէր ժամանակակից ֆրանսիական թատրոնական տազնապի
(La crise théâtrale) պատճառները:

Ֆրանսիական մի ուրիշ տաղանդաւոր քննադատ Փիլլ լը Մետր նոյնպիսի թախիժով ու անհաւատութեամբ է վերաբերուում դէպի դրամայի ապագան, ինչպէս Բրիւնտիէր: Լը Մետրի կարծիքով թատրոնական նորագոյն միատիցիզմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բարեպաշտութիւն առանց հաւատի, կրօնական հաստատութիւնների բռնի վերանորոգութիւն, կաթոլիկ դաւանութեան վերածնութիւն, նախապաշարմունքների վերադարձ— ահա ինչու մն է կայանում գրական նոր շարժման էութիւնը: «Այդ բոլորը նորաձեւութիւն է—գրում է քննադատը—ուրիշ ոչինչ, բայց եթէ ախորժելի խաղեր, որոնցով ձգտում են կրօնից հանել՝ իբր գեղարուեստական քաղցրութիւն՝ այն ամենը, ինչ սրտաշարժ է, յուզիչ է, գեղեցիկ է ու զգայուն...»

Ապա պատմական տեսութիւն է անում, ցոյց տալու համար, որ 17-րդ դարում ֆրանսիական դրամատուրգների ստեղծագործութիւնների մէջ լիովին բացակայում էին քրիստոնէական գաղափարներն ու կրօնական տարրերը: Գուցէ դա առաջանում էր վերածնութեան հեթանոսական ոգուց: Բաց կան նաև ուրիշ պատճառներ.—«Կորնելի և Մոլիերի ժամանակակիցները այնքան անկեղծ կրօնասէրներ էին, որ չէին կարող հանդուրժել թատրոնի վրայ—աշխարհիկ գուարճութիւնների այդ վայրում—չափազանց ուղղակի, չափազանց բաց ցուցադրութիւնը իրենց ամենասրբազան զգացումների, իրենց բարոյական էութեան... Հէնց այս առաքինի կրօնական ամօթխածութիւնն է բացակայում նորագոյն միատիցիզմի մէջ... և ահա թէ ինչու—եզրակացնում է քննադատը—ես չեմ կարծում, որ միատիքական շարժումը երբեք կարողանայ լուրջ նշանակութիւն և ապագայ ունենալ թատրոնի մէջ կամ գեղարուեստի միւս ճիւղերում:»

Սակայն լը Մետրը իզուր է կարծում, որ միատիցիզմի մէջ գոյութիւն ունի որևէ «բարեպաշտութիւնը առանց հաւատի»: Իզուր է կարծում, որ գրական նոր շարժման էութիւնը կաթոլիկ կրօնի և միջնադարեան միստերի վերածնութեան մէջ է կայանում:—Նորագոյն միատիցիզմը շատ լայն և միանգամայն տարբեր շարժում է: Նա կապ չունի առհասարակ որևէ բարեպաշտութեան հետ՝ լինի կաթոլիկ թէ բողոքական: Այնպիսի գրող ինչպէս Մետերլինկ շատ բարձր է կանգնած ծաղրուած կաթոլիկական բարեպաշտութիւնից: Նա անկեղծ, խորունկ միստիք է՝ առանց կաթոլիկ լինելու կամ առհասարակ

անց կրօնական որևէ դաւանանքի պատկանելու: Միթէ՞ միստիքական քիչ տարրեր կան Գէօթէի մէջ. միթէ՞ քիչ միստիցիզմ ունի Շէկսպիր, որ ստեղծել է Համլետի տիպը, այդ մեծագոյն յաւիտենական միստիքի տիպը՝ զերծ բոլոր կրօնական դաւանանքներից ու բոլոր սահմանափակ հաւատալիքներից...

Հետաքրքրական է սակայն, որ տաղանդաւոր քննադատը մշտապէս չնաց իր ծայրայեղօրէն բացասական վերաբերմունքի մէջ: Նոր շարժումը այնքան հրամայական պահանջ էր ամենքի համար, այնքան ներդաշնակ կապակցութիւն ունէր ժամանակակից մտքի ընդհանուր համակարգութեան հետ, որ նատուրալիզմի և ոչալիզմի ամենախոշոր ներկայացուցիչներն անգամ չկարողացան հաւատարիմ մնալ իրանց հասկացողութեան նոյնքան խիստ կերպով, ինչպէս առաջ: Ջոլան իր վերջին աշխատութիւնների մէջ չէ կարողանում այլևս հրապարակ գալ այն ծայրայեղ առարկայականութեամբ (օբյեկտիւնոստ—objectivité), որ սահմանաւորում էր ստեղծագործողի մահացութեամբ ու հոգու կամաւոր ինքնասպանութեամբ յանուն գիտական անհաշուութեան: Եւ Բօդլերի ակնարկած «մոսյալ անհետաքրքրականութիւնը» (la morne incuriosité) ասես կամաց-կամաց հեռանում էր նրա երկասիրութիւնների միջից՝ տեղի տարով յուզուող ու զգացող հետաքրքրականութեան...

Փիւլ լը Մետր՝ վաղեմի գրական աւանդութիւնների մէջ ձուլուած ու սննդուած այդ ծերունի քննադատը բացարձակապէս ու հիմնովին չփոխեց, իհարկէ, իր գեղարուեստական աշխարհայեացքը, սակայն մոռացաւ իր հիմնաւորաց ատելութիւնը և սկսեց հասկանալ նորերին: «L'impression de théâtre» վերնագիրը կրող աշխատութեան ութերորդ հատորի մէջ խօսելով նոր շարժման ներկայացուցիչ Մետելինկի մասին՝ նա գրում է ի միջի այլոց հետեւելը.— «Այնպէս, ակաման, հոգիների համր հաղորդակցութիւնները, արտաքին նշանները, մարմնաւոր և բարոյական (moral) աշխարհների խորհրդաւոր յարաբերութիւնները, ապրելու ապշեցնող իրողութիւնը, մահուան երկիւղն ու նախազգացումները, մեր իսկ ամբողջութեան մեզանից ծածուկ մասերը, մեր ներքին խաւարն ու մթութիւնը, մի խօսքով անգիտակից կեանքը—անաւասիկ մօտաւորապէս այն, ինչ որ Մետելինկ արտայայտում է պատկերներով և խորհրդանշաններով... Այն. Մետելինկ անգիտակցականի վրսեմի սարսափելի բանաստեղծն է... Բանաստեղծը ես՝ի մէջ թագնուած բոլոր ո՛չ-եմ'երի: Տեղատուած, թուլօրէն տեղաւորուած ժամանակի և տարածութեան մէջ՝ նրա դրամաները այնուամենայնիւ չեն անջատոււմ այս նիւթական աշխարհից, ուր բո-

լոր ոյժերը—նոցա հետ միասին և մեր կրքերը—իրանց թագնուած ծագումն ունին: Մետերլինկի բոլոր գործերում մի անծայր նրբութիւն, մի արցունքոտ ողբերգականութիւն կայ...» Միմվոլիզմի հինաւուրց երգուեալ թշնամին այսպիսի լեզուով է խօսում բելգիացի տաղանդաւոր միստիքի մասին:

Բրիւնտիերից և Ժ. Լըմետրից յետոյ՝ գրական նոր շարժումը դառնում է ընդհանուր քննադատութեան առարկայ: Ամեն կողմից սկսում են տարբեր հայեացքներով լուսարանել սիմվոլիստական դպրոցն ու նրա հետ կապուած փիլիսոփայական—գրական տրամադրութիւնները... Մենք կանգ կ'առնենք միայն մի քանիսի վրայ, որոնք այսպէս թէ այնպէս մեր առաջադրած նիւթի համար հետաքրքրականութիւն են ներկայացնում:

Պէտք է նկատել, որ բոլոր այդ քննադատութիւնների մէջ տիրապետող ոգին ընդհանրապէս համակրական է: Ասես ամենքն էլ գիտակից մի մոռացուած ճշմարտութեան՝ կամենում են ամեն կերպ փաստարանել նրա իրաւունքները: Յոգնած ըէալիստական աշխարհայեացքից, յուսախարուած դրական փիլիսոփայութիւնից՝ նոքա կամենում են մի ընդհանուր թձուիչքով թևակոխել հոգեկան և մտաւոր այն սահմանները, ուր աւելի դիրիւթեամբ են հետախուզում յաւիտենական ճշմարտութիւններն ու տիեզերական գերագոյն օրէնքները...

Ճրանսիական գրականութեան պատմագիրներից և նորագոյն քննադատներից մինը՝ Ռենէ Դումիկ (René Daumic) իր «les jeunes» («երիտասարդներ») վերնագիրը կրող քննական ուսումնասիրութեան մէջ այսպէս է ձևակերպում այն անձնական-ինթակայական (субъективъ) ոգին, իր նորագոյն գրական շարժման էական յատկանիշներից և տիրապետող գծերից մինն է. «Իդէալիզմը նոր գրականութեան հիմքն է կազմում. գեղարուեստական գրականութիւնն երազների բան է. գեղարուեստագէտը երազող է... Մենք միայն մեզ ենք ճանաչում. մեր մէջ են եղել այն էակները, որոնց մենք մեկնել ենք մեր ձեռքերը և այն իրերը, որոց մենք կամեցել ենք զարնուել... Մեր մէջն է եղել ծաղիկների բուրմունքը... Եւ մթին հեռաւորութիւնների այն ուղին, ուր մոլորում էր մեր ճակատագիրը՝ չէր տանում ուրիշ ոչ մի տեղ, բայց եթէ դէպի մեր հոգին... Մարդկանց մէջ մի անքակտելի համերաշխութիւն (solidarité) կայ և ամեն մէկը մեզանից իր մէջ կրում է ընդհանուր մարդկութեան մի կայարանը, մի կտորը... Մեր մէջ ուսումնասիրելով մեզ՝

մենք ուսումնասիրում ենք բոլոր միւսներին. մենք սովորում ենք ճանաչել մարդուն իր ամենաընդհանուր, էական և անփոփոխ գծերի մէջ... Մենք համաշխարհային ճակատագրի գիտակցութիւնն ենք ստանում: Այսպէս է, որ հոգին—զգացմունքների հանդարտութեան, կրքերի լուծեան ու շահերի մոռացութեան մէջ—դառնում է իր շուրջը և հիանում իր մէջ ապրող բացարձակութեան վրայ... Այս երազանքի արտայայտութիւնը պիտի լինի նորագոյն գրականութիւնը և սրանով է տարբերում նա բոմանտիզմից ու նատուրալիզմից...»

Միավորիստական գրական դպրոցի ամենաէական սիւներից մէկն էլ վերոյիշեալ փիլիսոփայական ըմբռնումն է: Մինչդեռ ամբողջ ընտրիստական գրականութեան մեծագոյն սկզբունքը առարկայի առաջնութիւնն է, մինչդեռ այնտեղ ստեղծագործողը ջնջում է առարկայական գործերի մէջ՝ այստեղ եւ՛ի, ենթակայի սկզբունքն է առաջնակարգ տեղ գրաւում, այստեղ ստեղծագործողը տիրապետում է գործերի վրայ: Միավորիստների ըմբռնումով աշխարհը մեր եւ՛ի և մեր հոգու ստեղծագործութիւնն է ու մեր հոգին միշտ ազատ է փոփոխութեան ենթարկել նրան՝ իր երևակայութեան և իր մտածումի համաձայն:

Դումիկ վերոյիշեալ աշխատութեան մի ուրիշ գլխի մէջ խօսելով Ֆրանսիական գրականութեան անսախանձելի վիճակի մասին՝ տխրութեամբ նկատում է. «Նատուրալիստ և ընտրիստ տեսութիւնները երկար ժամանակ ծանրացել և այսօր էլ ծանրանում են տակաւին մեր գրականութեան վրայ: Մի քանի հին հեղինակներ՝ իւրաքանչիւրը իր տեսակէտով և իր ձևով աշխատել են մեզ ազատել նատուրալիզմի կապանքներից... Այս շարժումն է շարունակում երիտասարդ գրողների մէջ փոքր ինչ այլ պայմանների տակ և այլ արտայայտութիւններով: Սրանց մէջ աչքի ընկնող տեղ է գրաւում Մետերլինկ, որի նշանակութիւնը լաւ հասկանալու համար՝ պիտի համեմատենք իրանից առաջ գոյութիւն ունեցող գրականութեան հետ: Փաստեր, դոկումենտներ, գիտական յաւակնութիւններ, միջավայրի բացատրութիւններ և միջավայրով պատճառաբանուած անհատական հուզեբանութիւն, մանրամասն դիտողութիւն և վերլուծութիւն արտաքին աշխարհի. այս բոլորը ընտրիստական գրականութեան էական յատկութիւններն են. մի գրականութիւն, որ ձգտում էր գիտական հետազոտութիւնների գործիք դառնալ և որի մէջ իրականութիւնը հետաքրքրական էր այնքան, որքան մասնաւոր էր ու նւթական: Մետերլինկի գրականութիւնը մի

ուժեղ պատասխան է բոլոր այս յաւակնութիւններին ու գեղարուեստական մոլորութիւններին»

Այսպէս ուրեմն Մետերլինկեան գրական ու փիլիսոփայական աշխարհայեցողութիւնները պիտի հանէին գրականութիւնը ստրկական վիճակից, պիտի ազատէին նրան «առարկայական և անաչառ գիտութեան» իշխանութիւնից և պիտի տային նրան գեղարուեստական այն բարձրութիւնն ու անկախութիւնը, որին արժանի է նա:

(Կը շարունակուի)

Սիմէօն Յակոբեան

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՅԻԱ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆ*)

I

Իշխանութեան ստիպողական գործառնութիւնը կամ Ֆունկցիան, որի ամենախիստ արտայայտութիւնն է պատիժը—պէտք է մանրագնին երաշխիքներ ունենայ, որպէսզի ծառայի միայն և եթ իրաւունքին:

Երբ կառավարութիւնը քաղաքացուն մեղադրում է քրէական որևէ գործողութեան մէջ, երբ քաղաքացուն օրինակարգի պահպանութեան տեսակէտով սպառնում են ծանր պատասխանատուութիւններով, երբ այդպիսով վէճ է ծագում քաղաքացու և տէրութեան մէջ,—ո՞վ և ի՞նչպէս պէտք է վճռի այդ սուր և վերին աստիճանի կարևոր հարցը: Անհրաժեշտ են երաշխիքներ, որպէսզի մեղադրուածի մէջ յարգուի անձնաւորութիւնը, անհրաժեշտ է որ այդ անձնաւորութիւնը ճանաչուի վիճող կողմ, որը վայելում է նոյն իրաւունքները, ինչպէս և նրա հակառակ կողմը՝ այսինքն կառավարութիւնը: Պէտք է երաշխիք լինի որ այդ վէճը կը լուծուի անաչառ երրորդ կողմից, որ միանգամայն ձեռնհաս է այդպիսի պատասխանատու նպատակ ստանձնելու համար:

*) Օգտուել ենք պրիվ.-դոց. Թ. Վ. Միխայլովսկու «Наказ. какъ факторъ Культуры жоулаածից» («В. Ф. и II.» 1905):